

ՄՈՒՐՍԻԼԻՍ II-Ի ՀԱՅԱՍՏԱԿԱՆ ԱՐՇԱԿԱՆՔՆԵՐԸ
(Նոր սկզբնաղբյուրներ)

ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ

Խեթական արքա Մուրսիլիս II-ի (մ.թ.ա. 1322/1–1305)¹ «Տարեգրութ-
յունները»², որոնք, Սուպպիլուլիումաս I-ի և Հայասայի արքա Խուկկանա-
յի միջև կնքված պայմանագրի հետ, Հայասայի պատմության հիմնական
սկզբնաղբյուրներն են, կարևորագույն տեղեկություններ են պարունա-
կում մ.թ.ա. XIV դ. վերջին քառորդում խեթահայասական փոխհարաբե-
րությունների վերաբերյալ³: Այստեղ հանդամանորեն շարադրված է Մուր-
սիլիսի կառավարման սկզբում Հայասայի (տարեգրության մեջ հիշատակ-
վում է որպես Ազզի) և սրա անմիջական հարևան կասկական Տիբիյա երկ-
րի կողմից խեթական տարածքների զավթման և դրան հաջորդած խեթա-

¹ Մուրսիլիս II-ի կառավարման տարեթվերը բերվում են ըստ վերջին՝ 1980-90-ական
թվականներին մասնագիտական գրականության մեջ արմատացած նոր ժամանակաշրջա-
նի (G. W i l h e l m u n d J. B o e s e. Absolute Chronologie und die hethitische Geschichte
des 15. und 14. Jahrhunderts v. Chr. – In: “High, Middle or Low?”. Acts of an International Collo-
quium on Absolute Chronology held at the University of Gothenburg 20th-22nd 1987[= SMA
80]. Gothenburg, 1987, S.74ff.; T. R. B r y c e. Some Observations on the Chronology of Sup-
piluliuma’s Reign. – “Anatolian Studies” 39, 1989, p.19ff.):

² Մուրսիլիսի «Տարեգրությունները», «10-ամյա տարեգրություններ» [= CTH 61.I],
«Ընդարձակ տարեգրություններ» [= CTH 61.II] զետեղված են հետևյալ հրատարակու-
թյուններում՝ A. G ö t z e. Die Annalen des Muršiliš, Leipzig (= „Mitteilungen der Vorderasi-
atisch-Agyptischen Gesellschaft“ 38), 1933, S.14ff.; CTH 61.I-ի վերահրատարակությունը՝ նոր
կցաբեկորների ներառմամբ՝ J. - P. G r e l o i s. Les Annales Decennales de Mursili II (CTH
61.I). – “Hethitica” IX, 1988, p.17ff.; Հայագիտական հրատարակություններում տեքստի
առանձին հատվածների գիտական տառադարձումը՝ В. Х а ч а т р я н. Восточные
провинции Хеттской империи. Ереван, 1971, с. 152 ձև., թարգմանությունը՝ Я.
М а н а н д я н. О некоторых спорных проблемах истории древней Армении.
Ереван, 1956, с. 89-90, 92, 96, 98, վ. Խ ա չ ա տ ը յ ա ն. Հայաստանը մ.թ.ա. XV–VII
դարերում. Երևան, 1998, էջ 69–77:

³ Այս ժամանակաշրջանի խեթահայասական փոխհարաբերությունների տարբեր խնդիր-
ները լուսաբանված են հետևյալ ուսումնասիրություններում՝ E. F o r t e t. Hajasa-Azzi –
“Caucasica” IX, S. 9ff.; Г р. К а п а н ц я н. Хайаса – колыбель армян. Ереван,
1948, с. 27; Я. М а н а н д я н. О некоторых спорных проблемах, с. 85սլ.;
J. G a r s t a n g a n d O. R. G u r n e y. The Geography of the Hittite Empire. London,
1959, p. 32ff.; И. М. Д ъ я к о н о в. Предыстория армянского народа. Ереван,
1968, с. 95սլ.; В. Х а ч а т р я н. Восточные провинции..., с. 19,20,61,62,130-
132,136սլ.; ն ու յ ն ի՝ Հայաստանը..., էջ 68-78, ն. Ա դ ո ն ց. Հայաստանի պատմու-
թյուն. Երևան, 1972, էջ 39–45: Հ. Ա վ ե տ ի ս յ ա ն. Հայկական լեռնաշխարհի և Հյուս-
սիսային Միջագետքի պետական կազմավորումների քաղաքական պատմությունը մ.թ.ա.
XVII-IX դդ. Երևան, 2002, էջ 76–82 և այլն: Մուրսիլիս II-ի հայասական արշավանքների
վերաբերյալ առկա տեքստային նոր նյութերի և մեկնաբանությունների համար տե՛ս H.
K l e n g e l. Geschichte des Hethitischen Reiches. Leiden – Boston – Köln, 1999, S. 188ff.; T.
R. B r y c e. The Kingdom of the Hittites. Oxford, 1999, p. 219ff.:

կան արքայի արչավանքների պատմությունը: Տևական պատերազմները, սկզբում գրավված շրջաններում, այնուհետև՝ Հայասայի տարածքում, ի վերջո, ավարտվեցին՝ վերջինս հնագանդեցվեց և Հայասայի արքա Աննի-յայի հետ պայմանագիր կնքվեց: Այդ պայմանագիրը, որի մասին հիշատակվում է «Տարեգրություններում»⁴ և որից այսօր սլահավանվել է ընդամենը երեք փոքր բեկոր, խեթահայասական թվով հինգերորդ(?) և վերջին պայմանագիրն է⁵, թերևս, կնքված Մուրսիլիս II-ի երկրորդ արչավանքի ավարտից անմիջապես հետո (նրա կառավարման II-րդ տարում, մ.թ.ա.1311–1310): Այնուհետև, գրեթե կես դար խեթական աղբյուրներում խեթահայասական հարաբերությունների վերաբերյալ այլևս տեղեկություններ չկան, ընդհուպ մինչև խեթական III-ի (ավելի հավանական է, թուրխալիյաս IV) կառավարման վերջերը, երբ հայտնվում են խեթահայասական ընդհարումներն արտացոլող մի խումբ գուշակային և այլ բնույթի տեքստեր⁶:

Հողվածում կներկայացնենք Մուրսիլիս II-ի օրոք կազմված երկու տեքստերի համապատասխան հատվածներ, որոնց պարունակած տեղեկություններն արքայի «Տարեգրություններում» հիշատակվող Հայասական պատերազմներին նվիրված մասերում բացակայում են և Հայագիտական հետազոտություններում դեռևս տեղ չեն գտել: Այս տեքստերից առաջինի ստեղծման շարժառիթը Մուրսիլիսի հոր՝ խեթական արքա Սուլպիլուլիումաս I-ի վերջին կնոջ՝ «տավանանայի» (խեթական թագուհիների տիրոջ) դավերն են Մուրսիլիսի և թագուհի Գասսուլիյավիյայի հանդեպ, երկրորդը՝ վերինեփրատյան կոմմախա քաղաքում խեթական արքայատոհմի անդամների առնչությունը իրականացված սև մոգություն գործողությունը: Վերջինս, ակներևաբար, նույնպես «տավանանային» պիտի վերաբերի, չնայած մասնագիտական գրականության մեջ այս առթիվ դեռևս միասնական կարծիք չկա: Ստորև ներկայացնենք «տավանանայի» և Մուրսիլիսի միջև ընթացած բախման համառոտ պատմությունը՝ վերոհիշյալ տեքստերի ամբողջական ընկալման համար բավարար ետնախորք ստեղծելու նպատակով:

⁴ A. G o t z e. Die Annalen des Muršilis. Leipzig, 1933, S. 139f.: Պայմանագիրը, թերևս, պիտի կնքված լիներ հաջորդ II-րդ տարում, քանի որ 10-րդ տարվա արչավանքը, ըստ տեքստի, անավարտ էր մնացել: Մուրսիլիսը հայտնում է, որ Ազգին հպատակեցնելուց հետո, ձմեռը վրա հասնելու պատճառով, նա վերադարձել էր խեթական սաս և միայն հաջորդ գարնանը նոր արչավանք էր ձեռնարկել, որից հետո հիշատակվում է ազգեցիների նոր հպատակությունը (նույն տեղում):

⁵ Այդ պայմանագրին ժամանակագրորեն նախորդում են թուրխալիյաս III-ի և Հայասայի արքա Մարիյայի, Սուլպիլուլիումաս I-ի և Հայասայի արքա Սուկկանայի միջև կնքված պայմանագրերը (տե՛ս ծանոթ. 2): Մրանցից բացի կան ևս երկուսը, որոնք ակնհայտորեն ավելի վաղ են, սակայն հստակ չեն թվագրվում՝ KUB XXVI 29 + KUB XXXI 55 (H. K I e n g e l. Die Rolle der „Ältesten“ (LÜ^m SU.GI) im Kleinasien der Hethiterzeit. – “Zeitschrift für Assyriologie” 57, 1965, S.227 [հատվածական]; H. O t t e n. Ein hethitischer Vertrag aus dem 15./14. Jahrhundert v. Chr. (KBo XVI 47). – “Istanbuler Mitteilungen” 17, 1967, S.60 [հատվածական]; S. d e l M a r t i n o. L'Anatolia occidentale nel medio regno Ittita. Firenze, 1996 (= „EOTHEN“ 5), p.73ff. [ամբողջական]) և KBo XVI 45 (առաջիկա հրատարակված է միայն ինքնագիր եղանակով):

⁶ KUB XLIX 11; KUB XLIX 70; IBoT 1 32; KUB LII 86; Kuşaklı, 14 և KBo XII 53 + KUB XLVIII 105.

Մուրսիլիսի երկու տեքստերում (KBo IV 8 + Izmir 1277 և KUB IV 4)⁷ շարադրված են «տավանանայի» արարքները: Այստեղ ասվում է, որ թագուհին «արքայի հոր տունը» (Սուպլիլուլիումասի արքունիքը) վերածել է օտար աստվածների արձանների կացարանի և աստվածային զայրույթով սպառնում է արքայական ընտանիքի անդամներին: Հատկապես արքայադուստրերին: Իսկ արդեն Մուրսիլիսի կառավարման 9-րդ տարում, նրա կողմից իրականացված սև մոդուլյան հետևանքով մահանում է թագուհին՝ Գասսուլիյավիյան: Արքան «տավանանայի» արարքների բացահայտման նպատակով դուշակային հարցում է անցկացնում: Եվ չնայած դուշակի դրական պատասխանից հետո, արքայի խոսքերով, նա կարող էր «տավանանային» մահվան դատապարտել, սակայն սահմանափակվում է միայն նրան պալատից հեռացնելով, միաժամանակ զրկելով siwanzanna քրմուհու ֆունկցիայից⁸, սակայն վերջինս հետո էլ դեռ շարունակում է իր դավերը⁹:

Այսպիսով, վերոհիշյալ տեքստերը վկայում են նախկին թագուհու և դորձող արքայի՝ Մուրսիլիսի միջև թշնամական հարաբերությունների առկայություն մասին: Իսկ ստորև հղվող առաջին տեքստն ամբողջացնում է «տավանանայի»՝ Մուրսիլիս II-ի դեմ նյութվող դավերը, որոնց վերջնական նպատակը իշխանությունը գավթելն էր:

1. KUB XIV 4.

Հակառակ կողմ IV

24) [ma-a-an I-NA KUR^{URU}A]z-zi-ma i-ya-ah-ḫa-at nu^dUTU-us sa-ki-ya-ah-ta MUNUS.LUGAL-ma

25) [..... ki-is-sa-a]n me-mi-is-ki-it e-ni-wa ku-it^dUTU-us s[a-ki-y]a-ah-ta

26) [..... i-si-y]a-ah-ta U-UL-wa ŠA LUGAL US i-si-ya-ah-ta nu-[wa] ma-a-an

27) [.....]^{MES^{URU}}Ha-at-ti-ma-wa-za AŠ-SUM BE-LU-UT-TI ta-ma-a-in

⁷ Հրատարակված են՝ S h. B i n - n u n. The Tawananna in the Hittite Kingdom. Heidelberg, 1975 (= "Texte der Hethiter", Bd.5), p.177ff. (Հատվածական), F r. C o r n e l i u s. Ein hethitischer Hexenprozess. – "Revue Internationale de Droits de l'Antiquite" XXII. Bruxelles, S.27ff.[ամբողջական], H. A. H o f f n e r. A Prayer of Mursili II about his Stepmother. – "Journal of American Oriental Society" 103/1, 1983 (KBo IV 8 + Izmir 1277 [ամբողջական]), p.187ff.; T h. v a n d e n H o u t. The Purity of Kingship. Leiden – Boston – Köln, 1998, p. 42f. (Հատվածական); S. d e l M a r t i n o. Le accuse di Mursili II alla regina Tawananna secondo il testo KUB XIV 4. Firenze, 1998 (= „EOTHEN“ 9), p. 19ff. [ամբողջական]:

⁸ KBo IV 8 II 2ff.; siwanzanna- տերմինը, որ բառացիորեն նշանակում է «աստվածամայր», նշանակել է քրմուհիների ինչ-որ կատեգորիա (J. F r i e d r i c h. Kurzgefasstes Hethitisches Wörterbuch. Heidelberg, 1991, S. 195):

⁹ KBo IV 8 III 15f.: na-as ki-nu-un [^{LU}SANGA-KU-NU IR-KU-NU]U Ú-UL ḫur-za-ki-iz-zi «Եվ այժմ նա չի շարունակում (արդյոք) անիծել [քո քրմին և քյոն ծառային](այսինքն՝ Մուրսիլիսին – Ա. Ք.):»: Թ. վան դեն Հոուտը չի բացատրում, որ «տավանանայի» անունը կարող էր լինել Ամմինայա, որը հիշատակվում է հղվող տեքստում (T h. v a n d e n H o u t. The Purity, p. 44):

- 28) [.....-w]a-za 'Am-mi-in-na-ya N[UMUN?] ŠA 'Am-mi-in-na-ya-ya
- 29) [..... i-y]a-an-zi ^dUTU^{ŠI}-ma-za I-NA KUR ^{URU}1a-ia-sa
- 30) [.....]x tup-pí-az EGIR-an-da ha-at-ra-a-es
- 31) [..... EGIR-an-d]a wa-tar-na-ah-ta ma-a-an ^{URU}Ha-ya-sa-az-ma
- 32) [.....] hu-u-da-a-ak U-UL me-mi-is-ta

Թարգմանություն

- 24) «Իսկ [եբբ] ես Ա[զզի երկիր] արշավեցի, արևը նշան տվեց: Իսկ թագուհին
- 25) [խաթթի]ր[ում] [խոսում էր (այսպես)]. «Այդ նշանը, որ արևը տվեց,
- 26) [ի՞նչ է այն կանխա]դուշակում: Արդյո՞ք (այն) արքայի մասին չի կանխադուշակում: Եվ եթե
- 27) [այն կանխադուշակում է արքայի մասին, արդյոք] խաթթիի [բնակիչ]ները ուր[ի]չ մեկին իշխանություն
- 28) [չսլիտի ընտրեն (բառացիորեն – «կամենան» – Ա. Ք.): Արդյոք նրանք Ամմիննայայի և Ամմիննայայի
- 29) [որդու(ն?) [.....]-են]: Իսկ Արևս Հայաստանում
- 30) [.....] կավե սալիկի վրա դու պատասխանեցիր»:
- 31) [.....] նա հրաման [արձակ]եց: Իսկ (եբբ) Հայաստանից
- 32) [.....] նա շտապ/տեղնուտեղը չասաց»:

Վերը հղվող տուժած տեքստի մեկնաբանությունը բարդ է և այլընտրանքի տեղիք չի կարող տալ: Մուրսիլիսի հայաստական արշավանքի ժամանակ «տավանանան», պատեհ առիթից օդովելով (արևի լրիվ կամ մասնակի խավարում), փորձել էր պալատական հեղաշրջում կազմակերպել և իշխանության դուրս անցնել: Տեքստից դժվար է որոշել, արդյոք արքան անմիջապես էր վերադարձել, թե հասցրել էր ավարտել սկսած արշավանքը: Մուրսիլիսի կառավարման 10-րդ տարում դեպի Հայաստան կազմակերպված արշավանքի նկարագրության մեջ «տավանանայի» միջադեպի մասին որևէ հիշատակություն չկա: Այստեղ շարադրվում են ռազմական գործողությունները, որոնք սկսվել էին Ինգալավա քաղաքից (^{URU}Ingalawa) և ավարտվել Հայաստանի երկու կարևոր քաղաքների՝ Արիպսայի (^{URU}Aripša) և Դուգգամայի (^{URU}Dugg/kk/qqam(m)a) նվաճումով: Դրանից հետո արքան վերադարձել էր մայրաքաղաք խաթթուսաս՝ այնտեղ ձմեռելու: Իսկ հաջորդ տարվա գարնանը վերսկսել էր արշավանքը, որի ընթացքում որևէ նվաճման մասին հիշատակություն չկա: «Տարեգրությունների»

այս հատվածում¹⁰ խոսվում է Խալիմանա (^{URU}Halimana) քաղաքից ոմն Մուտտիսի (^MMutti) մասին, որը ներկայացել էր խեթական արքային և հայտնել հայասացիների հպատակվելու պատրաստակամությունը: Հնարավոր է, որ նախորդ տարում Արիպսայի և Դուկկամայի նվաճումով Մուրսիլիսը կոտրել էր հայասացիների դիմադրությունը, ուղղակի ձմռան վրա հասնելը, թերևս, ավելի շուտ արքունիքում «տավանանայի» նյութած դավերը ստիպել էին նրան անավարտ թողնել սկսած դործը:

2. KUB XL 83.

Այս տեքստը սյատկանում է խեթական սեպագրական կորպուսում լավ վկայված տեքստերի մի խմբի, որը ստացել է «Դատական պրոցես» պայմանական անվանումը¹¹:

Այստեղ նկարագրվում են երեք անձնավորությունների նկատմամբ (սլահպանվել են երկուսի անունները) կոնմախայի մոտ գտնվող անտառում ոմն Տակի-չարրումայի և Մանա-Դուգուդի (վերջինս կին է) կողմից սև մողուկայան ակտի իրականացման մանրամասները. նպատակը սույն մարդկանց մահն էր: Դատելով մողուկայան օբյեկտ հանդիսացող մարդկանց անունների դիցանվանակերտ բնույթից, դրանք բարձրաստիճան անձինք են եղել, այդ թվում Մուրսիլիսի ավագ եղբայր Շարրիկուչուխը (խեթ. Պիյասսիլի)՝ Կարգամիսի արքան¹²:

Դիմային կողմ

- 2') [.....an-n]a ku-ra-at-ti-us [.....]
- 3') [.....]-at nam-ma ^mTa-ki-LUGAL-ma ^fMa-na-DUGUD-is
- 4') [.....] E-YA pé-es-ta ku-ut-ru-wa-an-ni-ma-wa-mu
- 5') [..... am]-me-el-ma-wa-ra-at-mu-kán an-na-an ku-ra-at-ti-us
- 6') [.....]-hi-ir-ra nu-wa-mu-kan am-me-el-la É-ir
- 7') [.....]x^{MEŠ} an-na ku-ra-at-ta pa-ra-a SUM-ir
- 8') [.....k]a-ri-wa-ri-wa-ar-wa hu-u-da-ak UGU e-hu
- 9') [... I-NA UD.x.]KAM-ti GIM-an GE₆-an-za ki-sa-at
- 10') [..... ^{URU}K]um-ma-ha SA ^{GIŠ}TIR ^mQa-ze-e-ra ki-i DÜ-at
- 11') [.....]-ir nu-wa ^fHi-la-ma-ad-du-un MUNUS.SUḪUR.LÁ
- 12') [.....]x-e-er UM-MA ^fHi-la-ma-ad-du-un-MA
- 13') [.....ŠA?] ^mQa-ze-e-ra-ia ^{MUNUS}u-da-ti-is
- 14') [.....] III ALAM^{MEŠ} DUH.LÁL ^{UZU}I.UDU DÜ-ir
- 15') [..... IŠ]-TU IM ha-ne-es-se-er nu-[w]a A-NA I ALAM

¹⁰ A. G ö t z e. Die Annalen des Muršiliš. Leipzig, S. 139f.
¹¹ = CTH 293-297. Հղվող տեքստը ամբողջությամբ հրատարակել է Ռ. Վերները (R. W e r n e r. Hethitische Gerichtsprotokolle. Wiesbaden, 1967 [= "Studien zu den Boghazköy-Texten" 4], S. 64ff.): Մի հատվածը տե՛ս Ա. Քոսյան. Անի-Վամախը խեթական դարաշրջանում. – «Պատմա-բանասիրական հանդես», 2002, №3, էջ 232–233:
¹² Դրանցից ^mLUGAL-«XXX-ը, թերևս, Սուպլիլուլիումաս I-ի որդին է՝ Կարգամիսի արքա Շարրի-Կուչուխը (խեթ. Պիյասսիլի), որը, ըստ Մուրսիլիս II-ի «Տարեգրություն» համապատասխան հատվածի (A. G ö t z e. Die Annalen, S. 108f.), հանկարծամահ եղավ արքայի կառավարման 10-րդ տարում: Տեքստի հրատարակիչ Ռ. Վերների կարծիքով, սև մողուկայան գործողությունն ուղղված պիտի լիներ խեթական արքայատոհմի անդամների դեմ (R. W e r n e r. Hethitische Gerichtsprotokolle, S. 66f.):

- 16') [..... A-NA] I ALAM-ma-wa-kan SUM ^mGAL[UR.MAH ME-ir
 17') [..... ^mLUGAL-^dXXX-u^z ti-i-e-er nu-w[a-ra]-at pat-te-er
 18') [.....] ti-i-e-er nu-wa-kan l-an l-e-da-ni
 19') [.....] nu-wa-kan an-da kis-an me-me-es-ta
 20') [... A-NA ^mGAL]-UR.MAH ^UA-NA ^mLUGAL-^dXXX-uh QA-TAM-MA
 21') [.....]x nam-ma-wa-za-kan ^fMa-na-DUGUD-is
 22') [.....a]n-da e-ep-pir [.....

ՀԿ

- 1) [..... IN]IM? ^fMa-na-DUGUD
 2) [.....] MA.A QA-TI

Թարգմանութուն

- 3) «[.....]... Հետո Տակիչարուման (և) Մանա-DUGUD-ը*
 4) [.....] իմ տանը նա տվեց: Իսկ վկայության համար ինձ
 5) [.....] եվ/իսկ [ի]նձ այդ (բանը) anna kuratta**
 6) [.....]... եվ ինձ իմ տունն էլ
 7) [.....]x anna kuratta-ն նրանք դուրս տվեցին (բաց թողե-
 ցին),
 8) [..... «Ա]ռավոտյան շտապ բարձրացիր»:
 9) [..... X օրվա] դիչերը արեց:
 10') [..... Կ]ոմմախայի մոտ դտնվող Քածերայի անտառում այդ արեց:
 11') [.....] Խիլամադդունը՝ ստրկուհին,
 12') [.....]-եց: Այսպես (ասում է) Խիլամադդունը.
 13') [.....] Քածերայի ուղատիսը***
 14') [.....] երեք պատկերներ մեղրամոմից՝ ոչխարի ճարպով պատ-
 ված, սլատրաստեցին:
 15) [.....] կավ[ով] պատեցին: «Մի պատկերի վրա
 16') [... անունը դրեցին], իսկ մյուս պատկերի [վրա] GAL-UR.MAH-
 ի**** անունը դրեցին:
 17) [.....Շարրի]-կուչուխի [անունը] դրեցին: «Այս/այդ ...
 18) [.....] դրեցին:
 19) [.....] եվ այսպես ասացին:
 20) [..... GAL]-UR.MAH-ի [համար] և Շարրիկուչուխի համար նույն-
 պես
 21) [.....]x: «Հետո Մանա-DUGUD-ը
 22) [.....]

Հակառակ կողմ

- 1) [.....] Մանա-DUGUD-ի [գո]րծը(?):
 2) [.....] վերջ»:

*Անձնանվան երկրորդ բաղադրիչը գրված է շումերագրով, որի խեթե-
 րեն համարժեքը հայտնի չէ:

*anna kuratius-ը մոգուլթյան ընթացքում կիրառվող ինչ-որ տերմին է, որի իմաստը պարզ չէ:

***¹³ u-da-ti-is բառը նշանակում է կանացի ինչ-որ սոցիալական կատեգորիա¹³:

**** Այս բարդ անձնանվան հնչյունական ընթերցումը հայտնի չէ:

Փամանակագրորեն այս տեքստում նկարագրվող մոգական գործողությունները, թերևս, պիտի տեղագրել Մուրսիլիսի կառավարման առաջին 10-11 տարիներն ընդգրկող հատվածի վերջում, եթե նկատի ունենանք, որ հիշատակվող Շարրիկուշուսը մահացել է 10-րդ տարում (տե՛ս ծանոթ. 18):

KUB XIV 4-ում հիշատակվող միջադեպի և KUB XL 83-ում արձանագրված սև մոգուլթյան գործողության միջև հնարավոր կապի առկայության վերաբերյալ մասնագետներից առայժմ միայն Ռ.Վերներն է ակնարկել¹⁴:

Վերը հղված տեքստերում պարունակվող տեղեկությունները թույլ են տալիս որոշակիորեն թարմացնելու Մուրսիլիս II-ի կառավարման առաջին տասնմեկ տարիների ընթացքում խեթական տերուլթյան և Հայաստյի միջև տեղի ունեցած ընդհարումների ընդհանուր քաղաքական համատեքստը:

Համառոտագրություններ

СТН – E. Laroche. Catalogue des Textes Hittites. Paris, 1971.

IBoT – Istanbul Arkeoloji Müselerinde bulunan Bogazkoy Tabletlerinden Seçme Metinler (Istanbul).

KBo – Keilschrifttexte aus Boghazkoy (Leipzig und Berlin), 1916ff.

KUB – Keilschrifturkunden aus Boghazkoy (Berlin).

ПОХОДЫ МУРСИЛИСА II ПРОТИВ ХАЙАСЫ (Новые первоисточники)

АРАМ КОСЯН

Р е з ю м е

Статья посвящена двум клинописным хеттским текстам, которые содержат информацию, связанную с хайасскими походами хеттского царя Мурсилиса II (XIV в. до н.э.). Первый текст (KUB XIV 4) упоминает попытку "тавананны" – мачехи Мурсилиса (последняя жена отца Мурсилиса – Суппилиумы I) устранить от власти царя в то время, как последний был занят походом против Хайасы. Второй текст (KUB XL 83) – протокол свидетельского показания о совер-

¹³ Յ. Ֆրիդրիխի բառարանում (J. Friedrich. Kurzgefasstes Hethitisches Wörterbuch. Heidelberg, 1991, S.237) այս բառը թարգմանված է որպես «այրի»:

¹⁴ R. Werner. Loc. cit.

шении акта черной магии, имевшего место близ города Куммаха против трех представителей царской династии; одним из последних, вероятно, был старший брат Мурсилиса — Пияссили, царь Каргамиса. KUB XL 83 можно рассмотреть в контексте конфронтации Мурсилиса с "тавананной", так как известно, что смерть Пияссили произошла именно в десятом году правления Мурсилиса, т. е. незадолго перед хайасским походом.

THE HAYASAEAN CAMPAIGNS OF MURSILIS II

(New data)

ARAM KOSYAN

S u m m a r y

The paper deals with two cuneiform Hittite texts which contain information regarding the events connected with the Hayasaean campaigns of Mursilis II, king of the Hittite Empire (the 14th c. B.C.). The first text (KUB XIV 4) mentions an attempt of tawananna, the stepmother of Mursilis II (the last wife of Suppiululiumas I – father of Mursilis) to seize the royal power while the king himself was campaigning in Hayasa. The second one (KUB XL 83) is an account of a black magic act conducted near the city of Kummaha, in the neighborhood of Hayasa, against three persons belonging to the royal family, one of which, probably, was Piyassili the king of Kargamis, the elder brother of Mursilis. KUB XL 83 should belong to the general context of the confrontation between Mursilis and his stepmother, since it is well known that the death of Piyassili happened in the tenth year of Mursilis' reign, that is not long before the second Hayasaean campaign.